ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր՝ 17.12.2018թ. հ.01/38 գրության, տեղեկացվում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատվել է զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) բնակարանային պայմանների բարելավման հաշվառման վերցնելու կարգը:

Հետագայում՝ կառավարության 2017թ. օգոստոսի 10-ի հ.1016-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության նոր կարգը, որի 2-րդ կետի համաձայն՝ առաջարկվել է Երևանի քաղաքապետարանին կառավարության 2005թ. հունիսի 9-ի հ.947-Ն որոշման համաձայն ստեղծված բնակարանային հարցերի հանձնաժողովների միջոցով, մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ապահովել, մինչև կառավարության 2017թ. օգոստոսի 10-ի հ.1016-Ն որոշման ուժի մեջ մտնելը, որպես բնակարանային պայմանների կարիքավոր համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերի համապատասխանեցումը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների

սոցիալական ապահովության մասին» օրենքի 34-րդ հոդվածի ու կառավարության 2005թ. հունիսի 9-ի հ.947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին և հաշվառված անձանց ցուցակների ներկայացումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ քաղաքացի Սանամ Ղուկասյանը, որպես բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր, ընդգրկվել է համապատասխան ցուցակում և սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից տվյալ ցուցակներն առաքվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ